



Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ

(Արվեստագիտության թեկնածու)

ՀԱՄԱՌՈՏ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐ ՍՈՎԵՏԱՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ

1920

— Հայաստանի կառավարական համապատասխան մարմինները արձանագրեցին՝ փողային զինվորական մեկ նվազախմբի, մի քանի դաշնամուրների և դաշնամուրի մեկ դասատուի գոյությունը Երևանում (և սոփաաբակ հանրապետության ներկա սահմաններում)։

1921

— Հանրապետության կառավարական ջրջանների առաջարկով ու հրավերով Հայաստան տեղափոխվեց հայ կոմպոզիտորների, երաժշտագետների, դասախոսների, մանկավարժների ու երաժշտական գործիչների մի խումբ, սկիզբ դնելով մի մեծ շարժման, որը փաստորեն տևում է մինչև մեր օրերն իսկ, և որը, ըստ բոլոր տվյալների, շարունակվելու է դեռ երկար ժամանակ։

— Հիմնադրվեց Երևանի երաժշտական ստուդիան՝ դաշնամուրի, ջութակի, թալջութակի ու երգեցողության դասարաններով (կազմակերպչական աշխատանքների նախաձեռնող և առաջին տնօրեն Ռոմանոս Մելիքյան), որ ձեռք բերեց նաև համերգային հաստատության նշանակություն։

1922

— Մոսկվայում ստեղծվեց «Հայ երաժիշտների ընկերությունը» (կազմում՝ Լ. Խաչատրյան, Գ. Գաբրիելյան, Մ. Մազմանյան, Ս. Աղամազյան, Ա. Տոնիկյան, Մ. Աղայան և ուրիշներ, նախագահ՝ Գ. Բուդաղյան), որ կարևոր աշխատանքներ կատարեց հայկական մշակույթի զարգացման և հայ երաժշտության տարածման ու ժողովրդականացման ուղղությամբ)։

1923

— Երևանի երաժշտական ստուդիան վերածվեց ուսումնական բարձրագույն հաստատության՝ կոմսեր-կատորիայի (իր մեջ միացնելով նաև երաժշտական ուսումնարանը), որ հետո կոչվեց Կոմիտասի անունով։ Այստեղ բացվեց նաև փողային գործիքների դասարան և կազմակերպվեցին երգեցիկ խումբ ու սիմֆոնիկ նվագախումբ։

— Մոսկվայում «Հայ երաժիշտների ընկերության» նախաձեռնությամբ ստեղծվեց հրատարակչական մի շարքին, որ մինչև 30-ական թվականները առաջ տարավ հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների տպագրության գործը։

— Անուշավան Տեր-Լևոնդյանը հորինեց «Ախթա-նար» սիմֆոնիկ պոեմը։

— Կազմակերպվեց Երևանի փողային պիոներա-կան նվագախումբը (ղեկավար՝ Ն. Թեյմուրազյան)։

1924

— Լենինականում կազմակերպվեց օպերա-օպերե-տային այն խումբը (ղեկավար՝ Վաղերյանով-Չիպ-յան, դիրիժոր՝ Ալ. Մելիք-Փաշայան, գլխավոր մե-նակատարներ՝ Հայկանուշ Դանիելյան, Լ. Խեցկի-Հովհաննիսյան, Ծարա Տալյան, Մ. Սևդյան), որը տեղում ու նաև Երևանում ներկայացրեց այնպիսի ներկայացումներ, այն էլ հայերենով, ինչպիսիք են՝ Բիզեի «Կարմենը», Գունդի «Ճառասուր», Ռուբինշ-տեյնի «Իլը» և այլն։ Խմբի հիշյալ մենակատարները հանդիսացան ապագա օպերային թատրոնի երգչա-լին կազմի կորիզը։

— Երևանում կազացավ առաջին սիմֆոնիկ հա-մերգներից մեկը Ալ. Մելիք-Փաշայանի (Ա. քաժին) և Հովն. Հովհաննիսյանի (Բ. քաժին) ղեկավարությամբ։

— Լույս տեսավ Մոսկվայի «Հայ երաժիշտների ընկերության» օրգան «Այսպե և երաժշտություն» ամսագիրը:

— Երևանում կայացավ Ալեքսանդր Սպենդիարյանի հեղինակային սիմֆոնիկ համերգը (իր իսկ ղեկավարությամբ), որով վերջնականապես ձևավորվեց սովետահայ առաջին սիմֆոնիկ նվագախումբը:

— Լենինականում հիմնադրվեց երաժշտական ստուդիա (տնօրեն՝ Ի. Ղազարյան):

1925

— Ստեղծվեց լարացին այն կվարտետը, որն հետագայում կոչվեց՝ Կոմիտասի անվան հայկական պետական կվարտետ (մասնակիցներ՝ Ավ. Գաբրիելյան, Լ. Օհանջանյան, Մ. Տերյան, Ս. Ալամազյան):

— Ալ. Սպենդիարյանը հորինեց «Երևանյան էտյուդները», լավարտեց «Ալմաստ» օպերայի Ա և Բ գործողությունները ու սկսեց Գ. գործողությունը:

— Կազմակերպվեց ՀՍՍՀ գիտության և արվեստի ինստիտուտը:

1926

— Լույս տեսավ երիտասարդ Արամ Խաչատրյանի «Պարք» ջութակի և դաշնամուրի համար:

— Կոմսերվատորիայի (և, միևնույն ժամանակ, առհասարակ Հայաստանի հանրապետության) երաժշտա-կատարողական երկու գլխավոր կոլեկտիվները՝ երգչախումբը (ղեկ.՝ Սպ. Մելիքյան) ու սիմֆոնիկ նվագախումբը (ղեկ.՝ Ալ. Սպենդիարյան), փայլուն ելույթ ունեցան Անդրկենտրոնիկոմի հեթոթական ճշտաշրջանի մասնակիցների համար Երևանում տրված համերգում, որին բարձր գովեստներով արձագանքեց անդրկովկասյան մամուլը:

— Երևանում հանդիսավոր կերպով նշվեց Ալ. Սպենդիարյանի ստեղծագործական գործունեության 25-ամյակը:

— ՀՍՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի աշխատակից Սպ. Մելիքյանը կազմակերպեց բանահավաքման՝ պետական հիմքերի վրա դրված առաջին արշավը (լինելով Ախտայի և Կոտայքի շրջանների 22 գյուղերում), որ և ալմանդույթ դարձավ դրանից հետո:

1927

— Բացվեց Երևանի ռադիոստուդիան:

— Ստեղծվեց ռադիոհաղորդման կոմիտեի ժողովրդական գործիքների անսամբլը (ղեկ.՝ Ա. Մերանգույան):

— Ստեղծվեց «Հայ աշուղներ» անսամբլը (նախաձեռնող ու ղեկավար՝ Ծարա Տալյան):

— Ալ. Սպենդիարյանը ավարտեց «Ալմաստ» օպերայի Գ. գործողությունը:

— Լույս տեսան Ալ. Սպենդիարյանի «Երևանյան էտյուդները» (պարտիտուր):

— Հայպետհրատի արվեստի սեկցիայում (ղեկ.՝ Ե. Զառեմ) որոշվեց երաժշտական գրականության հրատարակությունը:

— Լույս տեսավ Ա. Խաչատրյանի դաշնամուրային «Պոեմը»:

— Կոմսերվատորիայի՝ արդեն իսկ կատարողական բարձր մակարդակ նվաճած երգչախումբը Սպ. Մելիքյանի ղեկավարությամբ առաջին անգամ և փայլուն ելույթ ունեցավ Մոսկվայում, հնչեցնելով կոմստապան խմբերգերը:

— Մոսկվայում մեծ հաջողությամբ անցան Ալ. Սպենդիարյանի հեղինակային համերգները:

— «Գումրեցի» ստորագրությամբ լույս տեսավ «Նիկողայոս Տիգրանյանն ու Արևելքի երաժշտությունը» աշխատությունը (ռուսերեն):

— Լույս տեսավ Սպ. Մելիքյանի և Գ. Գաբրիելյանի կազմած «Վաճառ ժողովրդական երգեր» ժողովածուի Ա տետրը:

1928

— Վախճանվեց Ալ. Սպենդիարյանը, չհասցնելով գործիքավորել «Ալմաստ» օպերայի Դ գործողությունը:

— Ռ. Մելիքյանը լույս բնծայեց «Զմրուխտի» երգաշարքը, շարունակելով աշխատել «Զատ-վատի» վրա:

— Լույս տեսավ «Վաճառ ժողովրդական երգեր» ժողովածուի Բ տետրը:

— ՀՍՍՀ գիտության և արվեստի ինստիտուտը գումարեց հայ ժողովրդական երաժշտության գրառման, մշակման և ուսումնասիրման հարցերին նվիրված հանրապետական կոնֆերանս, որտեղ զեկուցումներով հանդես եկան՝ Ռ. Մելիքյանը, Սպ. Մելիքյանը, Վ. Դորդանյանը, Մ. Աղայանը, Ա. Տեր-Ղևոնդյանը, ինչպես նաև Մ. Արեղյանն ու Գ. Լևոնյանը:

1929

— Հայաստանի կառավարության հանձնարարությամբ Ալ. Սպենդիարյանի մտերիմ ընկեր Մ. Ծուխյան-բերգը գործիքավորեց «Ալմաստ» օպերայի Դ գործողության երաժշտությունը:

— Հիմնվեց Երևանի ռադիոկայանը:

— Ա. Խաչատրյանը հորինեց «Երգ-պոեմը» ջութակի և դաշնամուրի համար:

— Կ. Զաքարյանը ստանձնեց կոմսերվատորիայի երգեցիկ խմբի ղեկավարությունը:

1930

— Մոսկվայի Սեմ թատրոնի ֆիլիալում առաջին անգամ բեմ բարձրացավ Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերան:

— Լույս տեսավ Ռ. Թերլեմեզյանի կազմած «Կոմիտաս» ժողովածուն:

— Երևանում կազմակերպվեց օպերային ստուդիա (ղեկավար՝ Ա. Տեր-Ղևոնդյան):

— Հիմնադրվեց ժողովրդական Տունը (որ հետո դարձավ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոն):

— Լույս տեսավ Սպ. Մելիքյանի «Հայ ժողովրդական երգի գամմաները» աշխատությունը:

— Ստեղծվեց «Հայաստանի պրոլետարական երաժիշտների ասոցիացիան»:

1931

— Լույս տեսավ Կոմիտասի «Բողոքական երգեր: Ազգագրական ժողովածու» Ա հատորը (նախկինը նույնպես փոխադրությունը՝ Եվրոպական, առաջարկներ և ծանոթագրությունները՝ Սպ. Մկիթյանի):

1932

— Հիմնադրվեց Երևանի օպերային թատրոնը, որի երգեցիկ խումբն ու սիմֆոնիկ նվագախումբը կազմվեցին Կոմերիատորիայի երաժշտա-կատարողական համապատասխան կոլեկտիվների հիման վրա (դիրիժորներ՝ Գ. Բուդալյան և Ա. Չարեցյան):

— Կազմակերպական ձևափոխում տեսցավ Հայֆիլհարմոնիան:

— Կազմավորվեց «Հայաստանի պրոլետարական երաժիշտների ասոցիացիան»:

— Ստեղծվեց Հայաստանի կոմպոզիտորների միությունը (նախագահ՝ Մ. Աղաբաբյան):

— Լույս տեսավ Կոմիտասի «Մեներգներ» տետրը (Ա սերիա):

— Լույս տեսավ Սպ. Մկիթյանի «Կոմիտասի ստեղծագործությունների անալիզը» աշխատությունը:

— Ա. Խաչատրյանը հորինեց դաշնամուրային «Տոկատան» և «Տրիոն» կլավենտի, ջութակի ու դաշնամուրի համար:

— Ստեղծվեց Ալ. Սպենդիարյանի անվան լարային կվարտետը (մասնակիցներ՝ Հ. Բոգդանյան, Ա. Դրիզորյան, Ա. Ազատյան, Գ. Աղամյան):

1933

— «Ամսաստ» օպերայով հանդիսավոր կերպով բացվեց հայկական պետական օպերային թատրոնը (դիրիժորներ՝ Գ. Բուդալյան և Մ. Սուրբանյան, ռեժիսոր՝ Ա. Բուրջալյան, նկարիչ՝ Մ. Սարյան):

— Հիմնադրվեց «Խորհրդային արվեստ» ամսագիրը:

— Ա. Խաչատրյանը հորինեց «Պարային պոլիտ» սիմֆոնիկ նվագախմբի համար:

— Ն. Տիգրանյանը արժանացավ ՀԱՍՀ ժողովրդական կոմպոզիտորի կոչման:

— Վախճանվեց Սպ. Մկիթյանը:

1934

— Ա. Խաչատրյանը ախարտեց իր Առաջին սիմֆոնիան, որ միաժամանակ եղավ նաև հայկական առաջին սիմֆոնիան:

— Ա. Խաչատրյանը հորինեց հայկական առաջին ճնշուն ֆիլմի՝ «Պարոյի» երաժշտությունը, որով սկզբնավորվեց հայկական կինոերաժշտությունը:

— Լույս տեսավ Կոմիտասի «Խմբերգեր» տետրը (Ա սերիա):

— Կոմերիատորիային կից ստեղծվեց գիտահետազոտական կարիքնո՝ երաժշտա-ազգագրական, հայ երաժշտության պատմության ու տեսության և ուսումնա-մեթոդական բաժիններով (նախաձեռնող ու ղեկավար՝ Ա. Քոչարյան):

— Բացվեց Լենինականի երաժշտական ուսումնարանը:

Վախճանվեց Վ. Ղարսեյանը:

1935

— Բեմ բարձրացավ Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերան:

— Բեմադրվեց Հ. Ստեփանյանի «Քաջ Նավար» կոմիկական օպերան (լիբրետո՝ Գ. Գեմիլյանի):

— Երևանի օպերային թատրոնը սկսեց նաև բալետներ բեմադրել:

— Լույս տեսավ Կոմիտասի «Մեներգներ» տետրը (Բ սերիա):

— Լույս տեսավ Սպ. Մկիթյանի «Ուրվագիծ հայ երաժշտության պատմության» աշխատությունը:

— Փարիզում վախճանվեց Կոմիտասը:

— Վախճանվեց Ի. Մելիքյանը:

1936

— Ա. Խաչատրյանը հորինեց «Դաշնամուրային կոնցերտը»:

— Հ. Ստեփանյանը հորինեց «Սասունցի Դավիթ» օպերան:

— Երևանում կայացավ Սպար-Նովային նվիրված համամիութենական գիտական նստաշրջան:

— Երևանի պանթեոնում թաղվեց Կոմիտասը:

1937

— Ստեղծվեց հայկական պետական երգչախումբը (ղեկավար՝ Թ. Ալթունյան):

— Կազմակերպվեց ռադիոկոմիտեի երգեցիկ խումբը (ղեկավար՝ Կ. Զաքարյան):

— Ստեղծվեց Հայֆիլհարմոնիայի ժողովրդական գործիքների նվագախումբը (ղեկավար՝ Գ. Սիրոյան):

— Կազմակերպվեց Երևանի միլիցիայի փողային նվագախումբը (ղեկավար՝ Ն. Թեյմուրազյան):

— Հայպետհրատում կազմակերպվեց նոտային տպագրության հատուկ բաժին (ղեկավար՝ Յ. Պողոսյան):

— Հայաստանի պետական գրադարանում ստեղծվեց երաժշտական գրականության կարիքնո (նախաձեռնող՝ Ն. Թեյմուրազյան):

— Կայացավ ինքնագործունեության հանրապետական օլիմպիադան:

— Լույս տեսավ Կոմիտասի «Խմբերգեր» տետրը (Բ սերիա):

— Ա. Խաչատրյանը հորինեց «Զանգեզուր» կինոնկարի երաժշտությունը:

— Երևանի օպերային թատրոնում սկսվեց երգիչ Պ. Լիսիցյանի և երգչուհի Տ. Սազանյանի ստեղծագործական ուղին:

1938

— Ստեղծվեց հայկական ժողովրդական երգի և պարի անամբը (ղեկավար՝ Թ. Ալթունյան):

— Կազմակերպվեց Հայֆիլհարմոնիայի՝ աշուղական երգի անամբը (ղեկավար՝ Ծ. Տալան):

— Ստեղծվեց հայկական էստրադային պետական նվագախումբը (ղեկավար՝ Ա. Ալվազյան):

— Հիմնադրվեց Երևանի երաժշտական տասնամյա դպրոցը:

— Բեմ բարձրացավ Հ. Ստեփանյանի «Լուսաբացին» օպերան:

— Ա. Խաչատրյանը հորինեց «Սիմֆոնիկ պոեմը» նվագախմբի ու երգեցիկ խմբի համար:

— Երևանի օպերային թատրոնի գլխավոր դիրիժոր նշանակվեց Մ. Թալրիզյանը:

1939

— Երևանի օպերային թատրոնը բեմադրեց Ա. Խաչատրյանի «Երջանկություն» բալետը, որով փաստորեն սկսվեց հայկական ազգային բալետի զարգացումը:

— Մոսկվայում կայացավ հայ արվեստի տասնօրյակը, որ հանրագումարի թերեց նաև սովետահայ երաժշտական մշակույթի նվաճումները*:

— Հ. Դանիելյանը արժանացավ ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհու կոչման:

— Լույս տեսավ Կոմիտասի մշակած մեներգների լրացված հատորը (խմբ.՝ Ն. Թոռչյան):

— Հ. Հովհաննիսյանը ավարտեց «Հայ երաժշտության պատմություն» մենագրությունը, որ Սպ. Մելիքյանի վերոհիշյալ աշխատությունից («Ուրվագիծ») հետո, երկրորդ փորձն է այդ ասպարեզում:

— Լույս տեսավ Ա. Ծաֆվերդյանի «Ալեքսանդր Սպենդիարյան» աշխատությունը (ռուսերեն):

— Լույս տեսավ Ա. Քոչարյանի «Հայ ժողովրդական երաժշտությունը» աշխատությունը (ռուսերեն):

— Գր. Եղիազարյանը հորինեց «Ռապսոդիան» նվագախմբի համար:

1940

— Ա. Խաչատրյանը հորինեց Զուլթանի կոնցերտը:

— Երևանի երաժշտական ուսումնարանը դարձավ ինքնուրույն (կոմերիկատորիայից անկախ) հաստատություն:

— Հայաստանի պետական երգչախմբի գեղարվեստական ղեկավար նշանակվեց Ա. Տեր-Հովհաննիսյանը:

* Միութենական մամուլը շատ բարձր գնահատեց տասնօրյակի արդյունքները. «Սովետական Հայաստանի արվեստի ծաղկումը հիքրավի փառաբեղ է: Սովետական մեծ Միության քոլոր հանրապետությունները հպարտանում են իրենց գեղանի քույր Հայաստանով: Փառք հայ ժողովրդին: Փառք նրա մեծ արվեստին: Փառք և ողջուն Սովետական Հայաստանի արվեստի աշխատողներին» («Պրավդա», 20.10.1939):

1941

— Լույս տեսավ «Կոմիտաս, հողվածներ և ուսումնասիրություններ» գիրքը (կազմող՝ Ռ. Թերլեմեզյան):

— Ա. Խաչատրյանի Զուլթանի կոնցերտը արժանացավ ՍՍՀՄ Պետական մրցանակի:

— Բեմադրվեց Կ. Զաքարյանի «Մարջան» օպերան:

— Սկսվեց «Սովետական գրականություն և արվեստ» ամսագրի հրատարակությունը:

1942

— Մյանհիլյանի անվան հանրային գրադարանում հայտնաբերվեց Տիգրան Զուլթանյանի «Արշակ Բ» օպերայի տպագրված լիբրետոն:

— Տիգրան Զուլթանյանի դիվանում հայտնաբերվեց «Արշակ Բ» օպերայի երաժշտության ձեռագիր օրինակը:

— Երևանում բացվեց երաժշտական կոմեդիայի պետական թատրոնը (դիրիժոր՝ Ա. Տեր-Հովհաննիսյան):

— Ա. Խաչատրյանը հորինեց «Գալանե» բալետը («Երջանկություն» բալետի վերամշակման հիման վրա):

— Գր. Եղիազարյանը հորինեց «Հայաստան» սիմֆոնիկ պոեմը:

1943

— Ա. Խաչատրյանը հորինեց Երկրորդ սիմֆոնիան:

— Հ. Ստեփանյանը հորինեց Առաջին սիմֆոնիան:

— Սկսվեց Ա. Սպենդիարյանի «Երկերի լիակատար ժողովածուի» հրատարակությունը (խմբ.՝ Գ. Բուդաղյան):

— Երևանի երաժշտական կոմեդիայի թատրոնում բեմ բարձրացավ Տ. Զուլթանյանի «Կարինե» («Լեւակիճի հորհոր») կոմիկական օպերան:

1944

— Ա. Խաչատրյանը հորինեց Հայաստանի հանրապետության պետական հիմնը (խոսք՝ Սարմենի):

— Կազմակերպվեց ՀՍՀՂ գիտությունների ակադեմիայի երաժշտության պատմության ու տեսության սեկտորը:

— Թրիլիսիում կայացավ անդրկովկասյան հանրապետությունների արվեստի տասնօրյակը, որտեղ հորինեց փայլուն քննություն բունցին հայ երաժշտական մշակույթի ստեղծագործող ու կատարող ներկայացուցիչները:

1945

— Երևանի օպերային թատրոնում առաջին անգամ բեմ բարձրացավ Տ. Զուլթանյանի «Արշակ Բ» օպերան:

— Ստեղծվեց Հայֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախումբը ու կայացավ նրա առաջին համերգը (ղեկավար՝ Մ. Մալունյան):

— Կայացավ Հայաստանի կոմպոզիտորների միու-

թյան առաջին համագումարը (նախագահ՝ Հ. Ստեփանյան):

— Բեմադրվեց Լ. Խոջա-Էյնաթյանի «Նամուս» օպերան:

— Հ. Ստեփանյանը հորինեց Երկրորդ սիմֆոնիան:

— Լ. Խոջա-Էյնաթյանը արժանացավ ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործչի կոչման:

— Հայաստանի կառավարությունը հաստատեց հանրապետության պետական թիմեր:

— Կ. Սարաջյանն ու Կ. Բուդաղյանը արժանացան ՀՍՍՀ ժողովրդական արտիստի կոչման:

1946

— Լույս տեսավ Սայաթ-Նովայի հայերեն երգերի ժողովածուն (կազմեցին՝ Մ. Աղայան և Ծ. Տալյան):

— Ա. Խաչատրյանը հորինեց Թավջութակի կոնցերտը:

— Երևանում կայացավ Ալ. Սպենդիարյանի ծննդյան 75-ամյակին նվիրված գիտական նստաշրջան:

— Հ. Գանիեկյանը և Մ. Թավրիզյանը արժանացան ԼՍՀՄ Պետական մրցանակի:

1947

— Բեմ բարձրացավ Ա. Խաչատրյանի «Գայանե» օպերան:

— Ա. Խաչատրյանը հորինեց Երրորդ սիմֆոնիան (սիմֆոնիա-պոեմ՝ նվագախմբի, երգեհոնի և 15 հանելվալ շևիորների համար):

— Կ. Չերտադյանը հորինեց «Հայաստան» կանտատ-պոեմը:

— Է. Միրզոյանը հորինեց լարային Կվարտետը:

— Դուշանբեի օպերային թատրոնը բեմադրեց Ա. Բալասանյանի «Լեյլի և Մեջնուն» օպերան:

— Պրագայում, երիտասարդության համաշխարհային ֆեստիվալում, առաջին մրցանակի արժանացավ Կարեն Խաչատրյանի Սոնատը ջութակի և դաշնամուրի համար:

1948

— Ալ. Հարությունյանը հորինեց «Հայրենիք» կանտատը:

— Է. Միրզոյանը հորինեց «Հայաստան» կանտատը:

— Լույս տեսավ Շերամի երգերի ժողովածուն (կազմեց՝ Վ. Տալյան):

— Երևանում քաղվեց արվեստի աշխատողների Տոմը:

— Կազմավորվեց Հայաստանի կոմպոզիտորների միության երկրորդ համագումարը (նախագահ՝ Ա. Սարգսյան):

1949

— Ա. Տիգրանյանը ախարեց «Դավիթ քեկ» օպերան:

— Լույս տեսավ Ի. Մելիքյանի «Զառ-Վառ» երգաշարը:

— Բուդապեշտում, երիտասարդության միջազգային ֆեստիվալում, առաջին մրցանակի արժանացավ երգչուհի Զ. Դոլուխանյանը:

— Երևանի օպերային թատրոնում ստեղծագործական ուղին սկսեց երգչուհի Գ. Գասպարյանը:

— Լույս տեսավ Սպ. Մելիքյանի կազմած «Հայ ժողովրդական երգեր և պարեր» ժողովածուի Ա հատորը (խմբ.՝ Մ. Աղայան):

1950

— Բեմ բարձրացավ Ա. Տիգրանյանի «Դավիթ քեկ» օպերան:

— Ա. Բաբաջանյանը հորինեց «Հերոսական քաղաք» դաշնամուրի և նվագախմբի համար:

— Ա. Սարգսյանը հորինեց «Արարատյան հովտի երգերը»:

— Լույս տեսավ Կոմիտասի «Ազգագրական ժողովածուի» Բ հատորը (կազմող՝ Մ. Աղայան, խմբ.՝ Կ. Կուշնարյան):

— Բեմադրվեց Հ. Ստեփանյանի «Հերոսուհին» օպերան:

— Ա. Բաբաջանյանը ախարեց իր Սիմֆոնիան:

— Վախճանվեց Ա. Տիգրանյանը:

1951

— Բացվեց Կիրովականի երաժշտական ուսումնարանը (տնօրեն՝ Եղ. Կզարթմյան):

— Ա. Բաբաջանյանի «Հերոսական քաղաքը» արժանացավ ԼՍՀՄ Պետական մրցանակի:

— Երգչուհիներ Գ. Գասպարյանը, Զ. Դոլուխանյանը, Տ. Սազանդարյանը և դիրիժոր Մ. Թավրիզյանը արժանացան ԼՍՀՄ Պետական մրցանակի:

— Երևանի օպերային թատրոնում ստեղծագործական նոր ուղին սկսեց երգչուհի Զարեհ Լավրենցիդան:

— Ստեղծվեց դաշնամուրային Տրիոն (կազմում՝ Գ. Սարաջյան, Հր. Արաջյան, Ալ. Չուխչյան):

— Վախճանվեց Ն. Տիգրանյանը:

1952

— Գր. Եղիազարյանը հորինեց «Արևածագին» սիմֆոնիկ պատկերը:

— Լույս տեսավ Գր. Եղիազարյանի «Հայաստան» սիմֆոնիկ պոեմը:

— Լույս տեսավ Լ. Խոջա-Էյնաթյանի «Սիմֆոնիկ պարերի» Ա տետրը:

— Ալ. Դոլուխանյանը հորինեց «Հայկական կապրիչիոն» նվագախմբի համար:

— Կազմավորվեց Հայաստանի կոմպոզիտորների միության երրորդ համագումարը (նախագահ՝ Գր. Եղիազարյան):

1953

— Երևանում քաղվեց Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճը:

— Հ. Ստեփանյանը հորինեց Երրորդ սիմֆոնիան:

— Ա. Բաբաջանյանը հորինեց Դաշնամուրային տրիոն:

- Լույս տեսավ Սպ. Մելիքյանի «Հայ ժողովրդական երգեր և պարեր» ժողովածուի Բ հատորը:
- Երևանում ստեղծվեց սոցալտպին անամբը (մասնակիցներ՝ Մ. Մխիթարյան, Կ. Կոստանյան):

1954

- Ա. Խաչատրյանը ավարտեց «Սարսափ» բալետը:
- Լ. Խոջա-Էյնաթյանը ավարտեց Սիմֆոնիան:
- Լույս տեսան Լ. Խոջա-Էյնաթյանի «Սիմֆոնիկ պարերի» Բ և Գ տետրերը:
- Լույս տեսավ Ա. Բաբաջանյանի «Հերոսական բալլադը»:
- Հայաստանում հանրապետական չափացույցով անցկացվեց «Երգի օր»:

1955

- Գր. Եղիազարյանը ավարտեց «Սևան» բալետը:
- Լույս տեսավ Զիլվանու երգերի ժողովածու (կազմողներ՝ Մ. Աղալյան, Ը. Տալյան):
- Ս. Բալասանյանը հորինեց «Յոթ» հաշվական երգերը՝ սիմֆոնիկ նվագախմբի համար:
- Հիմնադրվեց «Սովետական արվեստ» ամսագիրը:
- Լույս տեսավ Ա. Աղաջյանի «Միջնադարյան Հայաստանի գեղագիտական հայացքները» աշխատությունը (ռուսերեն):

1956

- Լույս տեսավ Ալ. Ծաֆկերյանի «Կոմիտասը և հայ երաժշտական մշակույթը» մենագրությունը (ռուսերեն):
- Լույս տեսավ Գ. Տիգրանյանի «Հայ երաժշտական թատրոնը» աշխատության Ա հատորը (ռուսերեն):
- Լույս տեսավ Մ. Մուրադյանի «Քր. Կարա-Մուրզան և բազմամյանության արժատավորումը հայ երաժշտության մեջ» աշխատությունը:
- Մոսկվայում կայացավ հայ արվեստի և գրականության երկրորդ տասնօրյակը:
- Դիրիժյորներ Ս. Չարեքյանը, Մ. Մալունցյանը և խմբավար Ա. Տեր-Հովհաննիսյանը արժանացան ՀՍՍՀ ժողովրդական արտիստի կոչման:
- Մ. Թալրիզյանը, Գ. Գառապարյանը, Պ. Լիսիցյանը և Տ. Սազանդարյանը արժանացան ՍՍՀՄ ժողովրդական արտիստի կոչման:
- Կառուցվեց Հայաստանի կոմպոզիտորների միության վարչական նոր տունը:
- Կայացավ Հայաստանի կոմպոզիտորների միության չորրորդ համագումարը (նախագահ՝ Ղ. Սարյան):

1957

- Ալ. Հարությունյանը ավարտեց Սիմֆոնիան:
- Է. Հովհաննիսյանը ավարտեց Սիմֆոնիան:
- Զ. Տեր-Թադևոսյանը հորինեց Առաջին սիմֆոնիան:

- Էդ. Բաղդասարյանը հորինեց Ռապսոդիան ջութակի և նվագախմբի համար:

- Բեմ բարձրացավ Ա. Բաբաջանի «Արծաթեղ» օպերան:

- Բեմադրվեց Է. Հովհաննիսյանի «Մարմար» բալետը:

- Բացվեց Երևանի հեռուստատեսության ստուդիան:

- Մոսկվայում, երիտասարդության համամիութենական ֆեստիվայում, երգիչ Ա. Աղեյանը արժանացավ ոսկի մեդալի:

- Կ. Օրբելյանի լարային Կվարտետը արժանացավ համամիութենական մրցանակի:

- Է. Հովհաննիսյանի դաշնամուրային Կվինտետը արժանացավ հանրապետական առաջին մրցանակի:

- Լույս տեսան Ղ. Սարյանի «Սիմֆոնիկ պատկերներ»:

- Երևանում, թատերական հրապարակում, կայացավ Ալ. Սպենդիարյանի հուշարձանի բացումը:

- Վախճանվեց Մ. Թալրիզյանը:

1958

- Լույս տեսավ պրոֆ. Քր. Կուշնարյանի «Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցերը» կապիտալ աշխատությունը, ռուսերենով:

- Երևանում ստեղծվեց արվեստների գիտահետազոտական ինստիտուտը:

- Երևանում բացվեց անդրկովկասյան առաջին «Երաժշտական գարունը»:

- Լույս տեսավ Հ. Հարությունյանի կազմած ժողովրդական երգերի «Մանյակ» ժողովածուն:

- Ա. Բաբաջանը արժանացավ ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործչի կոչման:

- Վախճանվեցին Հ. Դանիելյանը և Ա. Սաթյանը:

- Հայֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր նշանակվեց Օ. Դուրյանը:

1959

- Լույս տեսավ Ալ. Ծաֆկերյանի «Հայ երաժշտության պատմության ակնարկներ, 19—20-րդ դդ.» աշխատությունը (ռուսերեն):

- Ա. Բաբաջանյանը հորինեց Սոնատը ջութակի և դաշնամուրի համար:

- Ստեղծվեց Հայաստանի պարի անսամբլը (ղեկավար՝ Է. Մանուկյան):

- Լույս տեսավ Ռ. Աթայանի «Հայկական խաչիկի նոտագրությունը» աշխատությունը:

- Լույս տեսավ Գ. Տիգրանյանի «Ալեքսանդր Սպենդիարյան» աշխատությունը (ռուսերեն):

1960

- Սկսվեց Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակությունը (խմբ.՝ Ռ. Աթայան):

- Լույս տեսավ Գ. Տիգրանյանի «Հայ երաժշտական թատրոնը» աշխատության Բ հատորը (ռուսերեն):

— Լույս տեսավ «Մովսեսական Հայաստանի երաժրշտությունը» հոդվածների ժողովածուն (հեղինակների խումբ, առանձին):

— Լույս տեսավ Գ. Գյուլանյանի «Իմանուս Մեկերյան» աշխատությունը:

— Բնագրվեց Կ. Արմենյանի «Խաչատուր Արովյան» օպերան:

— Բրյուսելի միջազգային մրցանակաբաշխության դափնեկիր դարձավ դաշնակահար Յու. Հայրապետյանը:

— Երևանում բացվեց արվեստների ժողովրդական համալսարանը:

1961

— Երևանի օպերային թատրոնը բեմադրեց Ա. Խաչատրյանի «Սարգստակ» օպերան:

— Ա. Հարությունյանը հորինեց «Ասք հայ ժողովրդի մասին» վոկալ-սիմֆոնիկ օրենք:

— Էդ. Բաղդասարյանը հորինեց դաշնամուրային պրելյուդները:

— Կատարվեց Էր. Հարությունյանի Կոնցերտները ջութակի և նվագախմբի համար (մեմակատար՝ Ա. Ցիցկեյան):

— Փարիզում միջազգային մրցանակաբաշխության դափնեկիր դարձավ ջութակահար Ժան Տեր-Մերկերյանը, արժանանալով առաջին մրցանակի:

— Լույս տեսավ գրուսան Հախատու «Իմ քնարը» երգերի ժողովածուն:

— Լույս տեսավ Ա. Գասպարյանի «Կոմիտաս» աշխատությունը:

— Գ. Ջաքարյանը արժանացավ ՀՍՀՄ ժողովրդական արտիստի կոչման:

— Վախճանվեց Ա. Տեր-Ղևոնդյանը:

— Կապցավ Հայաստանի կոմպոզիտորների միության երրորդ պլենումը՝ նվիրված հայ երաժշտագիտության հարցերին:

— Հայաստանի պետական երգչախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր ճանաչվեց Լ. Չեքիջյանը:

1962

— Ստեղծվեց հայկական պետական կամերային անսամբլը (ղեկավար՝ Զ. Սահակյան):

— Է. Միրզոյանը ավարտեց Սիմֆոնիան (յարային նվագախմբի համար):

— Կ. Օրբելյանը ավարտեց Սիմֆոնիան:

— Զ. Տեր-Թադևոսյանը հորինեց Երկրորդ սիմֆոնիան:

— Բացվեց Երևանի դաշնամուրի ֆաբրիկան:

— Լույս տեսավ «Հայրենարարձ հնչյուններ» ժողովածուի Ա հատորը (կազմող՝ Յ. Բրուսյան):

— Կապցավ Հայաստանի կոմպոզիտորների միության միջոցառող համագումարը (հավաքում՝ Է. Միրզոյան):

1963

— Երևանում մեծ հանդիսավորությամբ նշվեց Մայր-Նովայի ծննդյան 250-ամյակը:

— Լույս տեսավ Մալաթ-Նովայի հայերեն երգերի լրացված ժողովածուն:

— Ստեղծվեց Հայֆիլհարմոնիայի լսողային կվարտետը (կազմում՝ Լ. Մանիկոնյան, Մ. Երիցյան, Ա. Սուրբանյան, Ֆ. Սիմոնյան):

— Լույս տեսավ Ա. Սարաջանյանի Սոնատը ջութակի և դաշնամուրի համար:

— Լույս տեսավ «Ավանդի հայ երաժշտության պատմության» աշխատությունը (հեղինակներ՝ Բր. Կուշնարյան, Մ. Մուրադյան, Գ. Գյուլանյան):

1964

— Էստոնիայում անցկացվեց հայ արվեստի և գրականության շարքը:

— Երևանում ելույթ ունեցավ Լեոնային Ղարաբաղի ժողովրդական երգի և պարի անսամբլը:

— Հայաստանի երգի և պարի անսամբլը գաստրոլային շրջագայությունների մեկնեց Սիրիա և Լիբանան:

— Ստեղծվեց համրապետության առաջին պրոֆեսիոնալ փողային նվագախումբը (որպես գլուխ զեղարվեստական կոլեկտիվ, ղեկավար՝ Լ. Մեսկյան):

— Հայաստանի կոմպոզիտորների միության Տան դանդիում տեղադրվեց առաջին փողային երգեհոնը, և կայացավ երգեհոնային երաժշտության առաջին համերգը (մեմակատար՝ Վ. Ստամբուլցյան):

— Ա. Ամենյանը հորինեց Երկրորդ սիմֆոնիան:

— Գլխավորում բացվեց ՍՍՀՄ երաժշտական ֆոնդի կոմպոզիտորների ստեղծագործական Տունը:

— Լույս տեսավ Ա. Թադևոսյանի «Ապրիլում Մեկի» օպերան և հայ ժողովրդական երգը՝ աշխատությունը:

— Լույս տեսավ «Հայրենարարձ հնչյուններ» ժողովածուի Բ հատորը:

— Երգիչ Ն. Հովհաննիսյանը արժանացավ ՍՍՀՄ ժողովրդական արտիստի կոչման:

— Վախճանվեց Ա. Բարսեղ:

1965

Երևանում հիմնադրվեց ժողովրդական ֆիլհարմոնիան:

— Լույս տեսան Ա. Բարսեղյանի դաշնամուրային «Ինչ պատկերները»:

— Արվեստների գիտա-մետաղոտական ինստիտուտում երաժշտական ընդհանուր տեսությունից նշուղավորվեց՝ ժողովրդական երաժշտության տեսությունը: Այստեղ հավաքված ժողովրդական երգերի ձայնագրությունների թիվը անցավ 5000-ից:

1966

— Բուլղարիայում անցկացվեց հայ մշակույթի տասնօրյակ:

— Բեմադրվեց Է. Հովհաննիսյանի «Հավերժական կոտը» օպերան:

— Ստեղծվեց Երևանի ռադիոկոմիտեի սիմֆոնիկ նվագախումբը (ղեկավար՝ Օ. Գուրյան):

— Չեխովովակիայում կայացան հայկական մշակույթի օրեր:

— Զ. Դուրխանյանը արժանացավ Լենինյան մրցանակի:

— Վախճանվեց Հ. Ստեփանյանը:

1967

— Ղ. Սարյանը հորինեց «Արիա և տոկատա» երկմասանի ցիկլը քութակի և դաշնամուրի համար:

— Զ. Տեր-Թադևոսյանը ավարտեց լարացին Երկրորդ կվարտետը:

— Ալ. Հարությունյանը ավարտեց «Սայաթ-Նովա» օպերան:

— Բեմադրվեց Է. Արիստակեսյանի «Պրոմեթեոս» բալետը:

— Մոսկվայում անցկացվեց հայ արվեստի շաբաթ:

— Ստեղծվեց ՀՍՍՀ երգչախմբացին ընկերության երգեցիկ խումբը (ղեկ.՝ Թ. Ալթունյան):

— Լենինականում կազմակերպվեց սիմֆոնիկ նվագախումբ (ղիրիժոր՝ Ս. Մադոյան):

— Երևանում հիմնադրվեց երաժշտական գրականության պետական գրադարան:

— Բուլղարիայում անցկացվեցին հայ երաժշտության օրեր:

— Հիմնադրվեց Երևանի երաժշտական երկրորդ ուսումնարանը:

— Հայաստանի երաժշտական 7-ամյա դպրոցների թիվը անցավ 50-ից:

— Լեհաստանում անցկացվեցին հայ երաժշտության օրեր:

